ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՆՇԱՆԱՎՈՐ ՏԱՐԵԹԻՎ

Սովետական Միության և եղբայրական սոցիալիստական երկրների ժողովուրդները, ամբողջ աշխարհի աշխատավորները խանդավառությամբ տոնեցին Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 45-րդ տարեդարձը: Ինչպես միշտ, այս անգամ էլ այդ տոնակատարությունը վերածվեց մեր մեծ Հայրենիքի ձեռք բերած պատմական նվաճումների ստուգատեսի, դարձավ ժողովուրդների եղբայրության ու բարեկամության, աշխարհի խաղաղություն պահպանելու և ամրապնդելու նրանց անհողդողդ կամքի մի նոր վառ ցուցադրում:

Քառասունհինգ տարի առաջ «Ավրորա» հածանավի հաղթական համազարկերը ի լուր աշխարհի ազդարարեցին մարդկային հասարակության զարգացման նոր դարաշրջանի սկիզբը: Կոմունիստական պարտիայի, պրոլետարիատի հանճարեղ առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինի ղեկավարությամբ հաղթանակած Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ամբողջ մարդկության համար բացեց սոցիալիզմի և կոմունիզմի մայրուղին: Հոկտեմբերի դրոշը, որը բարձր ու հաղթականորեն ծածանվեց Ռուսաստանում, հին աշխարհի փլատակների վրա, պայծառ փարոսի նման ահա արդեն քառասունհինգ տարի է, ինչ լուսավորում է մարդկության առաջադիմության մեծ ճանապարհը:

Հոկտեմբերի դրոշը խաղաղության դրոշն է: Բնորոշ է, որ նորաստեղծ Սովետական կառավարության հռչակած առաջին դեկրետը Հաշտության դեկրետն էր, որը պատերազմը համարեց «մեծագույն հանցագործություն մարդկության դեմ»: Դատապարտելով պատերազմը՝ որպես վիճելի հարցերի լուծման միջոց, Սովետական կառավարությունը խաղաղասիրությունը դարձրեց իր արտաքին քաղաքականության հիմքը: Ղեկավարվելով հասարակական տարբեր կառուցվածք ունեցող պետությունների խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքով, Սովետների երկիրը գործադրել և գործադրում է գերագույն ջանքեր՝ մարդկությանը պատերազմի աղետներից զերծ պահելու համար: Սովետական Միության, համաշխարհային սոցիալիստական հզոր լագերի խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը հիացմունքով ու երախտագիտությամբ է լցնում աշխարհի բոլոր հասարակ մարդկանց սրտերը:

Հոկտեմբերի դրոշը ժողովուրդների եղբայրության ու բարեկամության դրոշն է: Կոմունիստական պարտիան կոփեց ու ամրապնդեց մեր մեծ Հայրենիքի ժողովուրդների եղբայրական սրբազան դաշինքը, որը աննախընթաց ուժով դրսևորվեց և՛ սոցիալիզմի կառուցման համար ծավալված խաղաղ շինարարության տարիներին, և՛ Հայրենական Մեծ պատերազմի ահեղ գոտեմարտերում: Այդ եղբայրությունը նոր դրաշջներ է գործում կոմունիստական շինարարության ներկա փուլում: Ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ մեր Հայրենիքի բոլոր ժողովուրդները անցած քառասունհինգ տարիների ընթացքում ձեռք են բերել պատմական նվաճումներ տնտեսության և կուլտուրայի ասպարեզներում: Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում վիթխարի առաջընթաց է ապրել նաև հայ ժողովուրդ: Սոցիալիստական կարգերի հաստատման շնորհիվ, մեր Հայրենիքի բոլոր ժողովուրդների անշահախնդիր համագործակցությամբ՝ Սովետական Հայաստանը դարձավ բարձր զարգացած արդյունաբերության, սոցիալիստական գյուղատնտեսության և ծաղկող գիտության ու կուլտուրայի ռեսպուբլիկա, որն իր ավանդն է ներդնում մեր երկրում կոմունիզմի կառուցման գործում: Ժողովուրդների եղբայրության ու բարեկամության վառ օրինակ է համաշխարհային սոցիալիստական սիստեմի երկրների մեծ համագործակցությունը, որը դարձել է մարդկության առաջընթաց շարժման վճռական գործոնը: Սովետական ժողովուրդը եղբայրական ջերմ զգացմունքներով է համակված դեպի գաղութակալության լծից ազատագրվող, իրենց ազատության ու անկախության համար պայքարող ժողովուրդները:

Մեծ Հոկտեմբերի հաղթական դրոշի ներքո սովետական ժողովուրդը կատարեց պատմական սխրագործություն՝ մեր երկրում կառուցեց սոցիալիզմ և այժմ անսպառ եռանդով ձեռնամուխ է եղել այն հոյակապ խնդիրների կենսագործ-

մանը, որ առաջադրված են ՍՄԿՊ XXII համագումարի կողմից ընդունված մեր պարտիայի նոր Ծրագրում։

Մեր Հայրենիքի համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակները մարքս-լենինյան ուսմունքի հաղթարշավն են։ Հատկապես բեկմնավոր, պատմական հրակայական նշանակություն ունեցող ժամանակաշրջան տանդիսացավ մեր երկրի հզոր առաջընթացի վերջին տասնամյակը։ ՍՄԿՊ XX, XXI և XXII համագումարների պատմական որոշումները, Ստալինի պաշտամունքի մերկացումը և նրա հետևանքների համարձակ վերացումը զարգացման ու սխրանքների նոր հորիզոններ բացին սովետական հերոս ժողովրդի առջև։ Գիտության ու տեխնիկայի նոր վերելքը, հզոր էլեկտրակայանների ու գործարանների կառուցումը, հանրահորերի շահագործումը, ատոմային էներգիան մարդկության բարօրությանն ի սպաս դնելու և տիեզերական տարածությունների նվաճման գործում ձեռք բերված խոշոր հաղթանակները, կոմունիստական աշխատանքի մասսայական շարժման ծավալումը և սովետական մարդկանց մյուս հայրենանվեր գործերը վկայում են մեր Հայրենիքի վիթխարի հաջողությունների մասին՝ կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում։

Իր հարազատ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, խաղաղ-ստեղծագործ աշխատանքով խանդավառված՝ սովետական ժողովուրդը այսօր ի տես աշխարհի ավելի բարձր ու հաղթականորեն է ծածանում Մեծ Հոկտեմբերի, կոմունիզմի անպարտելի դրոշը. այդ դրոշի վրա անջնջելի տառերով գրված է՝ «խաղաղություն, աշխատանք, ազատություն, եղբայրություն ու երջանկություն բոլոր ժողովուրդների համար»։

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

Այս տարվա Հոկտեմբերին ադրբեջանական ժողովուրդը, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, տոնեց իր մեծ գավակ Միրզա Ֆաթալի Ախունդովի ծննդյան 150-ամյակը։ Այդ հոբելյանը, Խորհրդային Համաշխարհային խորհրդի որոշմամբ նշվեց նաև միջազգային մասշտաբով։

Մ. Ֆ. Ախունդովը պատկանում է այն գործիչների թվին, որոնց գրական-հասարակական գործունեությունը մի ամբողջ դարաշրջան է կազմում իրենց ժողովրդի մշակույթի պատմության մեջ և գրանով իսկ ծառայում համաշխարհային բազաբակրթությանը։ Ինչպես ճիշտ կերպով նկատել է սովետահայ անվանի գրող Դ. Դեմիրճյանը, «իսկական մեծ գրող էր Միրզա Ֆաթալի Ախունդովը՝ իր ժողովրդի հարազատ որդին, ադրբեջանական գրականության խոշորագույն կլասիկը, համաշխարհային կուլտուրայի պայծառ դեմքերից մեկը։ Ախունդովը նրանով եղավ հարազատ բոլոր ժողովուրդներին, որ ամենից առաջ հարազատ եղավ իր ժողովրդին»։

Անգնահատելի են այն տեսակետից Մ. Ֆ. Ախունդովի ծառայությունները ադրբեջանական ժողովրդին։ Որպես ադրբեջանական դրամատուրգիայի, ռեալիստական արձակի, գրական լեզվաստեղծության հիմնադիր, որպես լուսավորիչ-դեմոկրատ ու մատերիալիստ-փիլիսոփա, Մ. Ֆ. Ախունդովը մեծ դեր է կատարել ադրբեջանական և ընդհանրապես արևելյան իրականության մեջ։ Իր գրական, գիտական և հասարակական գործունեությամբ Մ. Ֆ. Ախունդովը ծառայել է ժողովրդական մասսաների ազատության և լուսավորության մեծ պայքարին։ Նա խիզախորեն կռվել է բռնության ու խավարի, կրոնամոլության ու ֆանատիզմի դեմ։ Նրա երկերում արտացոլված են իր դարաշրջանի առաջավոր, լուսավորական-դեմոկրատական գաղափարները։

Մ. Ֆ. Ախունդովը գրական ասպարեզ է մտել XIX դարի 40-ական թվականներին, երբ բանաստեղծ։ Նա գրել է շուրջ 50 թեջնիաներ, մուխամմասներ, բասիդներ, էպիգրամներ, չափածո նամակներ։ Սակայն նրա պոեզիայի գագաթը «Հանրածանոթ «Արևելյան պոեմն» է, որը գրված է 1837 թ., Ա. Ս. Պուշկինի ողբերգական մահվան ազդեցությամբ։ Ժամանակի ռուսական մամուլը «Արևելյան պոեմը» համարել է «մի սքանչելի ծաղկեփունջ, որ Մ. Ֆ. Ախունդովը գրել է Պուշկինի գերեզմանին»։

Մ. Ֆ. Ախունդովի գրական ասպարեզը ծաղկեց և մի առանձին ուժով փայլեց հատկապես թատերգության մեջ։ 1850—55 թթ. նա գրեց մեկ կատակերգություն՝ «Մոլլա Իբրահիմ Խալիլ ալքիմիկոսը», «Մուսիո Ժորդանը և դերվիշ Մասթալի շահը», «Վենետիկի խանի վեղիրը», «Հաջի Կարաբան», «Ավազակին հաղթող արջը» և «Դատապարտյալները»։ Իր այս երկերում Մ. Ֆ. Ախունդովը ռեալիստական գույներով արտացոլել է ադրբեջանական ժողովրդի կյանքը,